Հիմնադիր – Founder – Учредитель:
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ (ԵՊՀ)
YEREVAN STATE UNIVERSITY (YSU)
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ (ЕГУ)
www.ysu.am

Հրատարակիչ – Publisher - Издатель:
ԱՐՑԱԽԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄ (ԱԵԳՄՄ)
UNION OF YOUNG SCIENTISTS AND SPECIALISTS OF ARTSAKH (UYSSA)
ОБЪЕДИНЕНИЕ МОЛОДЫХ УЧЁНЫХ И СПЕЦИАЛИСТОВ АРЦАХА (ОМУСА)
www.aegmm.org

ԳԻՏԱԿԱՆ ԱՐՑԱԽ

SCIENTIFIC ARTSAKH

НАУЧНЫЙ АРЦАХ

№ 3(6), 2020

«Գիտական Արցախ» *պարբերականն ընդգրկված է Հայաստանի Հանրապետության Բարձրագույն որակավորման կոմիտեի (ՀՀ ԲՈԿ) սահմանած դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների հիմնական արդյունքների ու դրույթների հրատարակման համար ընդունելի գիտական պարբերականների ցանկում:*

«Գիտական Արցախ» *պարբերականը կետեղված է www.elibrary.ru կայքում:*

*The **«Scientific Artsakh»** journal is included in the list of scientific periodicals acceptable for publication of the main results and provisions of doctoral and candidate theses established by the Higher Attestation Committee of the Republic of Armenia (HAC RA).*

*The **«Scientific Artsakh»** journal is posted on www.elibrary.ru website.*

*Журнал **«Научный Арцах»** включен в список научных периодических изданий, приемлемых для публикации основных результатов и положений докторских и кандидатских диссертаций, установленных Высшим аттестационным комитетом Республики Армения (ВАК РА).*

*Журнал **«Научный Арцах»** размещен на сайте www.elibrary.ru.*

«ԱՐՑԱԽ» հրատ. – «ARTSAKH» Publ. – Изд. «АРЦАХ»
ԵՐԵՎԱՆ – YEREVAN – ЕРЕВАН
2020

Տպագրվում է Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ

Համարը հրատարակության է երաշխավորել «Գիտական Արցախ» պարբերականի խմբագրական խորհուրդը

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Նախագահ՝ Արամ ՍԻՄՈՆՅԱՆ, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Գլխավոր խմբագիր՝ Ավետիք ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

Գլխավոր խմբագրի տեղակալ՝ Թեհմինա ՄԱՐՈՒԹՅԱՆ, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

Անդամներ՝
Լենա ԱՍՐՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր **(Տառագոնա, Իսպանիա)**
Արծրուն ԱՎԱԳՅԱՆ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Հրանտ ԱՎԱՆԵՍՅԱՆ, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Դավիթ ԲԱԲԱՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, դոցենտ
Վահրամ ԲԱԼԱՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Խաչիկ ԳԱԼՍՏՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Ջուլիետա ԳՅՈՒԼԱՄԻՐՅԱՆ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Վլադիսլավ ԳՐՈՒԶԴԵՎ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **(Կոստրոմա, ՌԴ)**
Գևորգ ԴԱՆԻԵԼՅԱՆ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Արման ԵՂԻԱԶԱՐՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Ալֆրեդ դե ԶԱՅԱՍ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **(Ժնև, Շվեյցարիա)**
Սեյրան ԶԱՔԱՐՅԱՆ, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Մարեկ ԺԵՅՄՈ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **(Օլշտին, Լեհաստան)**
Նատալյա ԿՈՎԿԵԼ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ **(Մինսկ, Բելառուս)**
Վալենտինա ԼԱՊԱԵՎԱ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Մոսկվա, ՌԴ)**
Օտտո ԼՈՒԽՏԵՐՀԱՆԴՏ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **(Համբուրգ, Գերմանիա)**
Ռուզաննա ՀԱԿՈԲՅԱՆ, իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ
Իրինա ՀԱՅՈՒԿ, փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ **(Լվով, Ուկրաինա)**
Նազիկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Մուշեղ ՀՈՎՍԵՓՅԱՆ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Գագիկ ՂԱԶԻՆՅԱՆ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Աշոտ ՄԱՐԿՈՍՅԱՆ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Էդիկ ՄԻՆԱՍՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Կարեն ՆԵՐՍԻՍՅԱՆ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
Հայկ ՍԱՐԳՍՅԱՆ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Յուրի ՍՈՒՎԱՐՅԱՆ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Մաքսիմ ՎԱՍԿՈՎ, սոցիոլոգիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **(Դոնի Ռոստով, ՌԴ)**
Գարիկ ՔԵՌՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Տիգրան ՔՈՉԱՐՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Գիտական Արցախ, № 3(6), 2020, Երևան, «ԱՐՑԱԽ» հրատարակչություն, 2020, 288 էջ:

«Գիտական Արցախ» պարբերականի 2020թ. 3-րդ (6-րդ) համարի տպագրությանն աջակցել է «SBS» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը:

ISSN 2579-2652

© Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորում (ԱԵԳՄՄ), 2020

Published by the Yerevan State University Academic Council Decision

The Issue is Recommended for Publication by the Editorial Council of the «Scientific Artsakh» Journal

EDITORIAL COUNCIL

Chairman: **Aram SIMONYAN**, Director of Institute for Armenian Studies of YSU, NAS RA Associate Member, Doctor of History, Professor

Editor-in-Chief: **Avetik HARUTYUNYAN**, Ph.D in Law, Associate Professor

Deputy Editor-in-Chief: **Tehmina MARUTYAN,** Ph.D in Philology, Associate Professor

Members:
Lena ASRYAN, Doctor of History (**Tarragona, Spain)**
Artsrun AVAGYAN, Doctor of Philology, Professor
Hrant AVANESYAN, Doctor of Psychology, Professor
David BABAYAN, Doctor of History, Associate Professor
Vahram BALAYAN, Doctor of History, Professor
Gevorg DANIELYAN, Doctor of Law, Professor
Khachik GALSTYAN, Doctor of Political Sciences, Professor
Gagik GHAZINYAN, Academician of NAS RA, Doctor of Law, Professor
Vladislav GRUZDEV, Doctor of Law, Professor (**Kostroma, Russia)**
Julieta GYULAMIRYAN, Doctor of Pedagogical Sciences, Professor
Ruzanna HAKOBYAN, Doctor of Law, Associate Professor
Nazik HARUTYUNYAN, Doctor of Pedagogical Sciences, Professor
Irina HAYUK, Ph.D in Philosophy, Associate Professor (**Lviv, Ukraine)**
Mushegh HOVSEPYAN, Doctor of Philology, Professor
Garik KERYAN, Doctor of Political Sciences, Professor
Tigran KOCHARYAN, Doctor of Political Sciences, Professor
Natalia KOVKEL, Ph.D in Law, Associate Professor **(Minsk, Belarus)**
Valentina LAPAEVA, Doctor of Law, Professor **(Moscow, Russia)**
Otto LUCHTERHANDT, Doctor of Law, Professor (**Hamburg, Germany)**
Ashot MARKOSYAN, Doctor of Economic Sciences, Professor
Edik MINASYAN, Doctor of History, Professor
Karen NERSISYAN, Ph.D in Economic Sciences, Associate Professor
Hayk SARGSYAN, Doctor of Economic Sciences, Professor
Yuri SUVARYAN, Academician of NAS RA, Doctor of Economic Sciences, Professor
Maksim VASKOV, Doctor of Sociology, Professor **(Rostov-on-Don, Russia)**
Arman YEGHIAZARYAN, Doctor of History, Professor
Seyran ZAKARYAN, Doctor of Philosophy, Professor
Alfred de ZAYAS, Doctor of Law, Professor **(Geneva, Switzerland)**
Marek ZEJMO, Doctor of Political Sciences, Professor **(Olsztyn, Poland)**

Scientific Artsakh, № 3(6), 2020, Yerevan, «ARTSAKH» Publishing House, 2020, 288 pages.

The publication of the 3rd (6th) 2020 «Scientific Artsakh» journal was supported by «SBS» LLC.

Издается решением учёного совета Ереванского государственного университета

Номер рекомендован к публикации редакционным советом журнала «Научный Арцах»

РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ

Председатель: **Арам СИМОНЯН,** директор Института арменоведческих исследований ЕГУ, член-корреспондент НАН Республики Армения, доктор исторических наук, профессор

Главный редактор: **Аветик АРУТЮНЯН,** кандидат юридических наук, доцент

Заместитель главного редактора: **Теймина МАРУТЯН,** кандидат филологических наук, доцент

Члены:
Арцрун АВАГЯН, доктор филологических наук, профессор
Грант АВАНЕСЯН, доктор психологических наук, профессор
Рузанна АКОПЯН, доктор юридических наук, доцент
Назик АРУТЮНЯН, доктор педагогических наук, профессор
Лена АСРЯН, доктор исторических наук **(Таррагона, Испания)**
Давид БАБАЯН, доктор исторических наук, доцент
Ваграм БАЛАЯН, доктор исторических наук, профессор
Максим ВАСЬКОВ, доктор социологических наук, профессор **(Ростов-на-Дону, Россия)**
Хачик ГАЛСТЯН, доктор политических наук, профессор
Ирина ГАЮК, кандидат философских наук, доцент **(Львов, Украина)**
Владислав ГРУЗДЕВ, доктор юридических наук, профессор **(Кострома, Россия)**
Джульетта ГЮЛАМИРЯН, доктор педагогических наук, профессор
Геворг ДАНИЕЛЯН, доктор юридических наук, профессор
Арман ЕГИАЗАРЯН, доктор исторических наук, профессор
Марек ЖЕЙМО, доктор политических наук, профессор **(Ольштын, Польша)**
Альфред де ЗАЙАС, доктор юридических наук, профессор **(Женева, Швейцария)**
Сейран ЗАКАРЯН, доктор философских наук, профессор
Гагик КАЗИНЯН, академик НАН РА, доктор юридических наук, профессор
Гарик КЕРЯН, доктор политических наук, профессор
Наталья КОВКЕЛЬ, кандидат юридических наук, доцент **(Минск, Беларусь)**
Тигран КОЧАРЯН, доктор политических наук, профессор
Валентина ЛАПАЕВА, доктор юридических наук, профессор **(Москва, Россия)**
Отто ЛЮХТЕРХАНДТ, доктор юридических наук, профессор **(Гамбург, Германия)**
Ашот МАРКОСЯН, доктор экономических наук, профессор
Эдик МИНАСЯН, доктор исторических наук, профессор
Карен НЕРСИСЯН, кандидат экономических наук, доцент
Мушег ОВСЕПЯН, доктор филологических наук, профессор
Гайк САРГСЯН, доктор экономических наук, профессор
Юрий СУВАРЯН, академик НАН РА, доктор экономических наук, профессор

Научный Арцах, № 3(6), 2020, Ереван, Издательство «АРЦАХ», 2020, 288 страницы.

Номер 3(6) журнала «Научный Арцах» был отпечатан при содействии ООО «SBS».

Էլինա Միրզոյան. «Թուրք երեխաների առևանգում և բռնի քրիստոնեացում»-ը՝ թրքական գիտատեղեկատվական զեղծարարություն.....156
Elina Mirzoyan. «Abduction and Forced Christianization of the Turkish Children» as the Turkish Scientific and Information Falsification
Элина Мирзоян. «Похищение и насильственная христианизация турецких детей» как турецкая научно-информационная фальсификация

Լիանա Պետրոսյան. Մ. Ահմադինեժադի դեմ ուղղված բողոքները. «Կանաչ շարժում».....175
Liana Petrosyan. Protests Against M. Ahmadinejad: «The Green Movement»
Лиана Петросян. Протесты против М. Ахмадинежада: «Зеленое движение»

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ECONOMICS, ЭКОНОМИКА

Ազատ Դավթյան. Դիտարկումներ Հայաստանի տնտեսության զորահավաքային ներուժի ընդլայնման վերաբերյալ.....184
Azat Davtyan. Observations on the Expansion of Mobilizational Potential of the Economy of Armenia
Азат Давтян. Наблюдения по расширению мобилизационного потенциала экономики Армении

Լիանա Իսայան. Սոցիալական կապիտալի գնահատման տարբեր մոտեցումները որպես հարցումների այլընտրանք.....195
Liana Isayan. Different Approaches to the Valuation of Social Capital as an Alternative to Surveys
Лиана Исаян. Различные подходы к оценке социального капитала как альтернатива опросам

Սոս Խաչիկյան. Կառավարման էլեկտրոնային համակարգերի ներդրման անհրաժեշտությունը ինքնակազմակերպվող պետական միավորների միջազգայնացման համատեքստում.....204
Sos Khachikyan. The Need of Electronic Management Systems Implementation in the Context of Internationalization of State Self-Organizing Entities
Сос Хачикян. Необходимость внедрения электронных систем управления в контексте интернационализации государственных самоорганизующихся образований

Լիլիթ Խուրշուդյան. Հայաստանի և հարևան երկրների ռազմական հզորության գնահատում.....214
Lilit Khurshudyan. Military Power Assessment of Armenia and Neighboring Countries
Лилит Хуршудян. Оценка военной мощи Армении и соседних стран

Հռիփսիմե Հովսեփյան. ՀՀ հանրային հատվածի ներքին աուդիտի հիմնահարցեր.....222
Hripsime Hovsepyan. Public Sector Internal Audit Issues in Armenia
Рипсиме Овсепян. Вопросы внутреннего аудита общественного сектора Республики Армения

Արմինե Սչանյան. Հանրության պահանջը և սոցիալական բնակարանաշինարարությունը ՀՀ-ում.....236
Armine Schanyan. Public Demand and Social Housing Construction in the RA
Армине Счанян. Требования общества и социальное жилищное строительство в РА

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՐԵՎԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՌԱԶՄԱԿԱՆ ՀԶՈՐՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ*[576]

ՀՏԴ. 351.86

ԼԻԼԻԹ ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ
Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի տեղակալի օգնական,
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի ասպիրանտ,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն,
lilit.khurshoodyan@gmail.com

Հոդվածի նպատակն է ռազմագիտական շրջանառության մեջ գտնվող առավել համապարփակ մոտեցումների հիման վրա գնահատելու և ներկայացնելու Հայաստանի ռազմական հզորությունը՝ հարևան երկրների ռազմական հզորության գնահատման ու համեմատության մեջ: Մեր խնդիրն է ներկայացնել պետության ռազմական հզորության բնորոշումները և գնահատման մոտեցումները, միևնույն մեթոդով հաշվարկելու հետազոտության համար հետաքրքրություն ներկայացնող երկրների ռազմական հզորությունը:

Որպես առավել բազմագործոն, համընդգրկուն, չափելի, ինչպես նաև ռազմական հզորության ձևավորման ու արտահայտման վրա առավելագույնս ներգործող ցուցիչների հաշվառման բանաձև՝ Հայաստանի Հանրապետության և հարևան պետությունների ռազմական հզորության գնահատման համար ընտրել ենք Քլայնի առաջարկած բանաձևը:

Նշված բանաձևով հաշվարկները փաստում են, որ պետության ռազմական հզորությունը պայմանավորող օբյեկտիվ գործոնները (տարածք, բնակչության թիվ, տնտեսական հնարավորություն) էական ազդեցություն ունեն դրա վրա, սակայն ՀՆԱ-ի աճի, ռազմական ծախսերի առավել արդյունավետ օգտագործման, տեղական սպառազինությունների արտադրության ծավալների մեծացման և այլ ուղղություններով ռազմավարական մակարդակի ճիշտ որոշումների կայացումը և պետական կառավարման որակը կարող են ստեղծել նախադրյալներ հնարավոր պատերազմում հաջողություն ունենալու համար:

Հայաստանի պարագայում ռազմական հզորության ընդլայնման համար ակնհայտորեն կարևոր է տնտեսական ու մարդկային ներուժի զարգացմանը, ինչպես նաև տեխնոլոգիական ճեղքվածքի հաղթահարմանը միտված տնտեսական քաղաքականության իրականացումը:

Հիմնաբառեր՝ ռազմական հզորություն, ռազմական ներուժ, Քլայնի բանաձև, պատերազմելու կարողություն, ռազմական ուժի ինդեքս, պետական կառավարում, ռազմական ծախսեր, ազգային ռազմավարություն:

---

* Հոդվածը ներկայացվել է 06.06.2020թ., գրախոսվել՝ 08.06.2020թ., տպագրության ընդունվել՝ 20.09.2020թ.:

[576] Հետազոտությունն իրականացվել է ՀՀ Գիտության կոմիտեի տրամադրած ֆինանսավորմամբ՝ 19T-5B12 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

Ներածություն

Աշխարհաքաղաքական ներկա բարդ իրադրության պայմաններում պետությունների համար խիստ կարևորվում է ազգային անվտանգության, սուվերենության, տնտեսական անկախության ապահովումը և ինչու չէ՝ նաև այլ պետությունների ու տարածաշրջանների վրա ազդեցություն ունենալու կամ դրա շրջանակներն ընդլայնելու կարողության ձևավորումը: Դրա ապահովման հիմնական «երաշխավոր»-ը պետության ռազմական հզորությունն է, որի կարևորագույն բաղադրիչը ներկայում և բոլոր ժամանակներում մնում է պետության տնտեսական հզորությունը: Այս երկուսը սերտորեն փոխկապակցված ուղիղ համեմատականներ են այն առումով, որ հզոր տնտեսությունը ռազմական ներուժի, հետևաբար նաև ռազմական հզորության գրավականն է: Ռազմական հզորությունն իր հերթին ապահովում է տնտեսության համակողմանի և «անխափան» զարգացում՝ ապահովելով անվտանգային միջավայր և հակառակորդի հնարավոր ագրեսիայի կանխարգելում:

Ինչպես ամեն տարի, այս տարի ևս հեղինակավոր «Global Firepower» հետազոտական կենտրոնի վերլուծաբանները կազմել են երկրների ռազմական ուժի վարկանիշային աղյուսակը (Military Strength Ranking-2020)[577]: Հաշվի են առնվել պետությունների ներուժը, սպառազինությունների, անձնակազմի, ֆինանսական ռեսուրսների, տարբեր զորատեսակների առկայությունը, տնտեսական վիճակի, բնակչության թվաքանակի և այլ ցուցանիշներ: 138 երկրների շարքում Հայաստանն այս տարվա ցուցակում զբաղեցրել է 111-րդ հորիզոնականը (նախորդ տարվա 92-րդ-ի փոխարեն): Հարևան երկրներից Ադրբեջանը զբաղեցրել է 64-րդ հորիզոնականը, Վրաստանը՝ 89-րդ, Թուրքիան՝ 11-րդ, Իրանը՝ 14-րդ: Առաջատար եռյակը կազմում են ԱՄՆ-ն, Ռուսաստանը և Չինաստանը:

Բազմաթիվ փորձագետների կարծիքով՝ վերոնշյալ ինդեքսը լիովին չի արտահայտում երկրների իրական ռազմական հզորությունը՝ չնայած այն հանգամանքին, որ, ըստ ինդեքսը հրապարակող կայքի, հաշվարկները կատարվում են հիմնականում պաշտոնական աղբյուրներում հրապարակվող տեղեկատվության հիման վրա: Ուստի մեր կողմից սույն հոդվածում հիմնական խնդիր է դրվել գնահատել Հայաստանի և հարևան պետությունների ռազմական հզորության ինդեքսները՝ ռազմագիտական շրջանառության մեջ գտնվող այլ՝ առավել համապարփակ մոտեցման վրա:

Պետության ռազմական հզորության բնորոշումները և գնահատման մոտեցումները

Գոյություն ունեն ռազմական հզորության տարբեր բնորոշումներ: Օրինակ՝ Զոլոտարևը կարծում է, որ ռազմական հզորությունը ձևավորվում է պետության տնտեսական, սոցիալական, գիտատեխնիկական, քաղաքական, բարոյահոգեբանական և ռազմական ներուժով (գործոններով)[578]: Որոշ դեպքերում պետության ռազմական հզորությունը բնորոշվում է որպես այլ երկրների դեմ պատերազմելու կարողություն՝ հասարակության նյութական ու հոգևոր ներուժի գերլարմամբ: Մեր կարծիքով՝ առավել համապարփակ է Բոգդանովի սահմանումը, այն է՝ պետության ռազմական հզորությունը տնտեսության նյութաարտադրական հնարավորությունների և հասարակության հոգևոր ուժերի ամբողջությունն է, ինչպես նաև պետության կողմից դրանք մոբիլիզացնելու

577 Աղբյուր՝ globalfirepower.com/countries-listing.asp.

578 **Золотарев В.А.,** Военная безопасность Государства Российского. 3-е издание; М., Воениздат, 2001, С. 1.

ունակությունը՝ պատերազմի կանխարգելման կամ հնարավոր ագրեսիային հակազդման նպատակով[579]:

Նկատենք, որ նման սահմանումը բավական մոտ է 1950-ական թվականներին Պրինստոնի համալսարանի պրոֆեսոր Կլաուս Կնորրի առաջարկած սահմանմանը, ըստ որի՝ պետության (ազգային) հզորությունը երկրի տնտեսական հնարավորությունների, վարչարարության մրցունակության և ռազմական մոբիլիզացիայի կարողության ամբողջությունն է:

Պետության հզորության ֆենոմենի ուսումնասիրության գործում մեծ ներդրում ունի գերմանական ծագմամբ ամերիկացի գիտնական Հանս Մորգենտաուն, որ առանձնացրել է այն բաղադրիչները, որոնցով կարելի է որոշել երկրի հզորությունը[580]՝ աշխարհագրական դիրքը և ռեսուրսները, արդյունաբերական ներուժը, զինված ուժերի քանակական և որակական հատկանիշները, մարդկային ռեսուրսը, ազգային բնութագիրը, ազգային բարոյական արժեհամակարգը, դիվանագիտության որակը և պետական կառավարման մակարդակը: Սակայն նկատենք, որ այս բաղադրիչները հիմնականում օբյեկտիվ գնահատման չափանիշներ չունեն:

Ռազմական հզորության գնահատման հիմնական բարդություններից մեկն այն է, որ դժվար է գտնել տարբեր երկրների համար կոնկրետ ժամանակաշրջանին վերաբերող համադրելի ու համաչափելի ցուցանիշներ, բացի այդ, նպատակահամար չէ ռազմական հզորության բաղադրիչների պարզ մեխանիկական գումարման արդյունքում ստանալ ռազմական հզորության հավաստի ցուցանիշ: Նման մոտեցումը խոցելի է թե՛ մեթոդաբանական և թե՛ տրամաբանական տեսանկյունից, քանի որ որոշ բաղադրիչների գնահատականը անպայմանորեն պետք է պարունակի սուբյեկտիվ մոտեցումների տարրեր: Ուստի ռազմական հզորության ձևավորման իրական գործընթացների ուսումնասիրությունը բավական դժվար է, և դրանց արդյունքները հաճախ չեն կարող լիարժեքորեն ծառայել որպես ռազմավարության մշակման մեթոդական կողմորոշիչ կամ գիտական հիմք: Մի բան, սակայն, ակնհայտ է՝ պետության ռազմական հզորության գնահատման ամենակարևոր սկզբունքներից մեկը ռազմական հզորության բաղադրիչների համադրումն է աշխարհաքաղաքական մրցակիցների այդօրինակ ցուցանիշների հետ[581]:

Այնուամենայնիվ, տարբեր հեղինակների կողմից մշակվել են ռազմական հզորության գնահատման որոշակի մեթոդներ և մոտեցումներ՝ հիմնված տարբեր բաղադրիչների ու չափորոշիչների վրա: Նման առաջին մոտեցումներից մեկը 1960-ական թվականներին Քեմբրիջի համալսարանի պրոֆեսոր Գերման Կլիֆորդի առաջարկած բազմագործոն բանաձևն է[582].

P = N(L+C+I+M), որտեղ՝

P – պետության ռազմական հզորությունն է,

N – պետության միջուկային հնարավորությունների գործակիցն է,

L –պետության տարածքն է,

C- բնակչության թիվն է,

---

579 **Богданов С.А.,** Экономическая составляющая военной безопасности России на современном этапе// Военная Мысль. 2004. № 12.

580 **Morgenthau H. J.,** Politics Among Nations: The Struggle for Power and Peace, Knopf, 1948, page 322.

581 **Հարությունյան Գ. Է.,** Պետության ռազմական հզորությունը: Ռազմական տնտեսագիտություն: «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի «Աշխատանքային տետրեր» հավելված, 2019թ, № 1-2 (49-500, էջ 7-36):

582 **Cliford German F.,** A Tentative Evaluation of World Power *Conflict Resolution. 1960,* Volume IV, Number 1, pp 138-144

I –արդյունաբերությունն է,

M –ռազմական ռեսուրսներն են:

Ըստ բանաձևի՝ պետության ռազմական հզորության որոշիչներն են տարածքը, բնակչության թիվը, արդյունաբերությունը, ռազմական ռեսուրսները, սակայն ակնհայտորեն որոշիչ դերը պատկանում է միջուկային հնարավորություններին, ինչը սահմանափակում է շատ երկրների համար այս բանաձևով ռազմական հզորության գնահատումը, քանի որ մեծ թվով երկրներ չունեն նման հնարավորություն և համեմատությունների համար այս ցուցանիշի կիրառումը չի ապահովի տարբերությունների իրական պատկերը:

Հետագայում՝ 1963 թվականին, միջազգային գործունեության արդյունավետության գնահատման նոր որակական չափորոշիչների մշակմանն ուղղված «Պատերազմի կոռելյացիաներ» (Corraletes of war) գիտական ծրագրի շրջանակներում ամերիկացի Դեյվիդ Ստինգերի կողմից առաջարկվեց ազգային հնարավորությունների գնահատման ընդհանրական ցուցիչ[583]: Այն ներառում է երեք պարամետրեր, որոնք թույլ են տալիս կանխատեսել պետության հնարավորությունները կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում: Կարճաժամկետ հեռանկարի պարամետրերն արտացոլվում են ռազմական հզորության մեջ՝ ներառելով ռազմական ծախսերն ու զինված ուժերի թվաքանակը: Միջնաժամկետ հեռանկարը որոշվում է արտադրական գործունեության մակարդակով, իսկ երկարաժամկետը՝ դեմոգրաֆիկ պատկերով:

1965 թվականին Բեռլինի տեխնիկական համալսարանի պրոֆեսոր Վիլհեմ Ֆուկեն առաջարկեց բազմատարբերակ գործակից, որը ռազմական հզորությունը ներկայացնում էր երեք հիմնական քանակական ցուցանիշների՝ բնակչության թվի, էներգիայի և պողպատի արտադրության համադրության հիման վրա: Դժվար չէ նկատել, որ այս դեպքում հաշվի չեն առնվում որակական ցուցանիշները[584]:

Պետության ռազմական հզորության գնահատման առավել համապարփակ մոտեցումներից մեկը 1975 թվականին առաջարկել է գիտնական-վերլուծաբան, ԱՄՆ կենտրոնական հետախուզական գործակալության աշխատակից Ռեյ Քլայնը: Ազգային հզորության հաշվարկի նրա ներկայացրած տարբերակում առկա են ինչպես օբյեկտիվ (քանակական գործոններ՝ բնակչության թիվ, տարածք, տնտեսական հնարավորություն և այլն), այնպես էլ սուբյեկտիվ (որակական՝ ազգային ռազմավարության գործակից, ազգային ռազմավարության նպատակներին հասնելու կամք) գործոններ.

P = (C+E+M) (S+W), որտեղ՝

P –պետության ռազմական հզորություն,

C –բնակչության թիվ և տարածք,

E –տնտեսական հնարավորություններ,

M –ռազմական ներուժ,

S –ազգային ռազմավարության գործակից,

W - ազգային ռազմավարության նպատակներին հասնելու կամքի գործակից:

Մեր հետազոտությունն իրականացրել ենք հենց Քլայնի առաջարկած բանաձևի օգնությամբ, քանի որ այն բազմագործոն է, համընդգրկուն և չափելի այն իմաստով, որ հաշվի են առնվում այնպիսի ցուցիչներ, որոնք առավելագույնս ներգործում են ռազմական հզորության ձևավորման ու արտահայտման վրա: Բացի այդ, ռազմական հզորության գնահատման ժամանակ առավել կարևոր է ուշադրություն դարձնել ոչ միայն

---

583 **Singer, J. David, Stuart Bremer, and John Stuckey.** (1972). "Capability Distribution, Uncertainty, and Major Power War, 1820-1965." in Bruce Russett (ed) Peace, War, and Numbers, Beverly Hills: pp, 19-48.

584 **Балахонцев Н., Кондратьев А.,** Зарубежные методы оценки потенциала стран (2010). (աղբյուրը՝ http://factmil.com).

դրա առանձին բաղադրիչներին, այլ նաև բաղադրիչների ընդգրկման առաջնահերթությանը, այսինքն՝ թե որքանով է այս կամ այն բաղադրիչը կարևորվում և ինչ համամասնություն ունի ընդհանուր ցուցանիշի մեջ: Հաշվարկված ցուցանիշը կարող է կարևորություն պարունակել միայն այն դեպքում, երբ այն դիտարկում ենք միևնույն մեթոդով հաշվարկված այլ պետությունների ռազմական հզորության հետ: Միայն այս դեպքում է հնարավոր հասկանալ և հետևություններ անել հաշվարկված գնահատականի վերաբերյալ:

Հայաստանի և հարևան պետությունների ռազմական հզորության գնահատում

Ինչպես արդեն նշեցինք, Հայաստանի ռազմական հզորությունը փորձելու ենք գնահատել տարածաշրջանի այլ երկրների (Վրաստան, Ադրբեջան, Իրան, Թուրքիա) ռազմական հզորության համանման ցուցանիշների համեմատության ճանապարհով՝ հաշվարկված Քլայնի բանաձևով: Նշենք, որ վերջինիս պարամետր հանդիսացող տնտեսական հնարավորությունները՝ E-ն, հաշվարկել ենք բնակչության մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ով, որի աղբյուրը Համաշխարհային բանկի տվյալների բազան է[585], իսկ որպես ռազմական ներուժի՝ M-ի չափորոշիչ՝ օգտագործել ենք երկրի ռազմական ծախսերը՝ արտահայտված 2017 թվականի հաստատուն գներով (դարձյալ բնակչության մեկ շնչի հաշվով), որի համար աղբյուր են Խաղաղության հիմնախնդիրների հետազոտման Ստոկհոլմյան ինստիտուտի տվյալները[586]:

Ինչ վերաբերում է սուբյեկտիվ գործոններին, ապա ազգային ռազմավարության գործակցի՝ S-ի հաշվարկման համար օգտագործել ենք օրենսդրական դաշտի որակի և պետական կառավարման արդյունավետության գործակիցները, իսկ ազգային ռազմավարության նպատակներին հասնելու կամքի գործակիցը՝ W-ն, դուրս է բերվել կոռուպցիայի նկատմամբ վերահսկողության, իրավունքի գերակայության, քաղաքական կայունության ու ձայնի իրավունքի և հաշվետվողականության գործակիցների միջինացված ցուցանիշով: Նշված բոլոր ցուցանիշների համար աղբյուր է հանդիսացել Համաշխարհային բանկի «Պետական կառավարման որակ» համաթիվը: Սուբյեկտիվ բոլոր գործոնների ցուցանիշները ներկայացված են Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

Սուբյեկտիվ գործոնների ցուցանիշները՝ ըստ Համաշխարհային բանկի «Պետական կառավարման որակ» համաթվի

Գործակից[587]	Երկիր				
	Հայաստան	Ադրբե-ջան	Վրաստան	Իրան	Թուր-քիա
	0-100(%-ային ցուցանիշ)				
Կոռուպցիայի նկատմամբ վերահսկողության գործակից	42.8	21.6	76.4	15.9	43.7
Պետական կառավարման արդյունավետություն	51.4	49.0	74.0	37.5	53.8
Քաղաքական կայունություն և բռության/ահաբեկչության բացակայություն	30.5	20.9	30	10.9	10
Օրենսդրական դաշտի որակ	62.5	37.0	83.2	7.7	52.4
Իրավունքի գերակայություն	48.6	29.3	63.9	25	42.3
Ձայնի իրավունք և հաշվետվողականություն	40.4	7.9	56.2	12.8	25.1

[585] Աղբյուրը՝ https://data.worldbank.org/indicator/NY.GDP.PCAP.CD

[586] Աղբյուրը՝ https://www.sipri.org/sites/default/files/Data%20for%20all%20countries%20from%201988%E2%80%932018%20in%20constant%20%282017%29%20USD%20%28pdf%29.pdf

[587] Հաշվարկներում նշված գործակիցներն օգտագործվել են տասնորդական միավորներով:

Ստորև ներկայացնում ենք Քլայնի բանաձևով հաշվարկների[588] արդյունքում ստացված ռազմական հզորության գնահատման արդյունքները համապատասխանաբար Հայաստանի, Ադրբեջանի[589], Թուրքիայի, Վրաստանի և Իրանի համար.

$P_{ՀՀ}$=59686897
$P_{ԱՀ}$=108.264.194
$P_{Թ}$=1589160259
$P_{Վ}$=43384856
$P_{Ի}$=1030529514

Վերջնական համեմատական ցուցանիշները ստանալու համար վերը արտացոլված արժեքային ցուցանիշները կրճատվել են միլիարդ անգամ՝ որպես չափման միավոր տարածքի ցուցանիշի համար վերցնելով հազար կմ^2-ն, իսկ բնակչության թվի համար՝ մլն մարդը: Արդյունքում՝

$P_{ՀՀ}$=0,06
$P_{ԱՀ}$=0,1
$P_{Թ}$=1,58
$P_{Վ}$=0,04
$P_{Ի}$=1,03

Ստացված գործակիցներից կարող ենք եզրահանգել, որ տարածաշրջանի երկրների շարքում Հայաստանն իր ռազմական հզորությամբ առաջ է միայն Վրաստանից, իսկ ոչ «բարեկամաբար» տրամադրված մեր երկու հարևան երկրներին զիջում է, էական է տարբերությունը հատկապես Թուրքիայի հետ համեմատության դեպքում: Նկատենք, որ մեր ստացած արդյունքները հիմնականում նման են Global Firepower ինդեքսին: Սակայն ակնհայտ է նաև, որ ո՛չ մեր հաշվարկներում, ո՛չ էլ նշված ինդեքսում հաշվի առնված չեն չափման չենթարկվող այնպիսի կարևոր գործոններ, ինչպիսիք են՝ զինվորական անձնակազմի բարոյահոգեբանական հատկանիշները, հայրենասիրությունը, ռազմական գործին քաջատեղյակությունը (որը հաճախ ժառանգական գենով փոխանցվող գործոն է) և այլն:

Եզրակացություններ

Կատարված հետազոտությունն արտացոլում է տարածաշրջանի պետությունների ռազմական հզորության վերաբերյալ արդեն իսկ ձևավորված պատկերացումները՝ միաժամանակ հնարավորություն տալով բացահայտել, որ իրականում պետությունների ռազմական հզորության գնահատման չափանիշներում էական փոփոխություններ չէին կարող լինել: Միշտ էլ բնակչության մեծ թիվ և մեծ տարածք ունեցող պետությունները այլ հավասար պայմաններում թե՛ տնտեսական զարգացման, թե՛ ռազմական հզորության ընդլայնման տեսանկյունից ավելի մեծ հնարավորություններ ունեն: Ընդ որում, թեև պետական կառավարման որակը կամ ռազմավարական մակարդակում խելամիտ որոշումների կայացումը կարող են մեծապես պայմանավորել պատերազմներում ներքաշված երկրների հաջողությունները, այնուամենայնիվ ռազմական հզորությունը պայմանավորող օբյեկտիվ գործոնների վրա դրանց ազդեցությունը կարող է ի հայտ գալ միայն որոշ ժամանակ անց՝ ՀՆԱ-ի աճի, ռազմական ծախսերի առավել արդյունավետ

[588] Հաշվարկներում տարբեր երկրների համար միևնույն ցուցանիշները ներկայացված են միևնույն ժամանակաշրջանի համար:

[589] Բնակչության թիվ և տարածք (C) գործոնը Ադրբեջանի դեպքում հաշվարկված է իրենց կողմից պաշտոնապես հրապարակված տարածքից հանած Արցախի Հանրապետության՝ Սահմանադրությամբ ամրագրված տարածքը:

օգտագործման, տեղական սպառազինությունների արտադրության ծավալների մեծացման և այլ ուղղություններով: Ակնհայտ է, որ գոնե միջնաժամկետ հեռանկարում ոչ իրատեսական է ակնկալել, որ պետական կառավարման արդյունավետությունը (որով, ի դեպ, Ադրբեջանը Համաշխարհային բանկի ինդիկատորներով զիջում է Հայաստանին) կարող է հիմք հանդիսանալ մեր երկրի տարածքի կամ բնակչության թվաքանակի աճի կանխատեսումների համար: Ուստի Հայաստանի ռազմական հզորության ընդլայնման համար այժմ և հետո առավել կարևորվելու է տնտեսական զարգացմանը, մարդկային կապիտալի զարգացմանը և տեխնոլոգիական ճեղքվածքի հաղթահարմանը միտված տնտեսական քաղաքականության իրականացումը:

MILITARY POWER ASSESSMENT OF ARMENIA AND NEIGHBORING COUNTRIES

LILIT KHURSHUDYAN
Ministry of Defense of the Republic of Armenia, Deputy Minister Assistant;
NAS of RA, Institute of Economics after M. Kotanyan, Ph.D. Student,
Yerevan, Republic of Armenia

The aim of the article is to assess and show Armenia's military power based on the most comprehensive approaches available in the military science, with assessment and comparison with the neighboring countries.

The objective is to present the characteristics of nation’s military power and the assessment approaches, as well as to measure the military capabilities of the countries of interest in the scope of this research with the same method.

For the assessment of the military capabilities of Armenia and neighboring countries the formula proposed by Cline was opted for, as the most multi-factor, comprehensive, measurable formula, which also calculates indicators with utmost impact on the formation and manifestation of military power.

The calculations based on this formula show that the objective factors that determine the nation’s military power (area, population, economic opportunity) have a significant impact on it, however correct strategic-level decision making on GDP growth, more efficient use of military expenditures, increase in local arms production and proper decision-making at the strategic level in other directions, as well as the quality of state administrative competence can create prerequisites for success in the war.

In the case of Armenia, it is obvious that the development of economic and human potential, as well as the implementation of economic policies aimed at bridging the technological gap, is important for expanding military power.

Keywords: *military power, military potential, Cline’s formula, combat capability, military power index, state administrative competence, military spending, national strategy*.

ОЦЕНКА ВОЕННОЙ МОЩИ АРМЕНИИ И СОСЕДНИХ СТРАН

ЛИЛИТ ХУРШУДЯН
помощник заместителя министра обороны Республики Армения,
аспирант института экономики имени М. Котаняна НАН РА,
г.Ереван, Республика Армения

Целью статьи является оценка и представление военной мощи Армении на основе наиболее полных комплексных подходов в военной науке и в сравнении с военной мощью соседних стран.

Наша задача– представить характеристики военной мощи государства и подходы к ее оценке, а также рассчитать военный потенциал стран, представляющих интерес для исследований.

Для оценки военной мощи Армении и соседних стран мы выбрали формулу, предложенную Кляйном, в качестве наиболее многофакторного и комплексного измерителя, а также как наиболее воздействующую формулу с учетом показателей на формирование и проявление военной мощи.

Расчеты, проведенные с помощью данной формулы, показывают, что объективные факторы, определяющие военную мощь государства (территория, население, экономические возможности), оказывают на него существенное влияние. Но рост ВВП, более эффективное использование военных расходов, увеличение производства оружия, принятие правильных решений на стратегическом уровне в других направлениях и качество государственного управления могут создать предпосылки для достижения успеха в войне.

В случае Армении очевидно, что для расширения военной мощи важно развитие экономического и человеческого потенциала, а также реализация экономической политики, направленной на преодоление технологического разрыва.

Ключевые слова: *военная мощь, военный потенциал, формула Кляна, боеспособность, индекс военной силы, государственное управление, военные расходы, национальная стратегия.*